



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 21 ՅՈՒՆԻՍ, 2021

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119


ՍՈՐՎԵՑՈՒՐ ԻՆՇԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Սորվեցուր ինձի, Տէր, կանոնների պահելու կերպը,
եւ մշտապէս պիտի կատարեմ վանոնք:
Տուր որ հասկնամ Օրէնքդ,
որպէսպի կատարեմ եւ ամբողջ սրտով հնազանդիմ անոր:
Պատուէրներուդ շաւիղին մէջ առաջնորդէ վիս,
որովհետեւ անոնցմէ՝ հաճոյք կ'առնեմ:
Ըրէ այնպէս՝ որ սիրտս պատուիրաններուդ փափաքի,
Քան անձնական հարստութիւն դիպելու:
Հայեացքս հեռացուր դատարկ բաներէն,
եւ քու կամքիդ գործադրութեամբ՝ կեանք Կուր ինձի:
Ես քու ծառայ եմ, կատարէ ինձի Կուլաձ խոստումդ,
այն խոստումը՝ որ կու փաս քեզմէ ակնածողներուն:
Հեռու պահէ նախապիւնքը՝ որմէ այնքան կը վախնամ,
որովհետեւ վճիռների արդար են:
Միակ փափաքս է՝ հրահանգների կատարել.
Կեանք Կուր ինձի, դու՛ն՝ որ արդար ես:

ՆԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ է՞ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ է՞ն արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ

ԱՌԱԿԱՅ 11 ԳԼՈՒԽ

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԹԱՍՏՈՒԹԻՒՆ 11:5-15

Յիշեցուց ըսելով. թե բարկութեան օրը, որ նաեւ Դապասսարանի օրուան մասին է խօսքը, այն հարստութիւնը որ ձեռք բերուած է նենգութեամբ, այդ հարստութիւնը օգուտ մը պիտի չընէ այդ օրուան համար: Եթէ երբեք այդ հարստութիւնը դիզուած էր քիչ մը ճոխ ու շռայլ կեանք մը ապրելու, սակայն անօրէնութեամբ ձեռք բերուած, այդ կեանքի ձեւը օր մը պիտի վերջ գտէ, ու այնքան դիզուած հարստութիւնը ինչ օգուտ պիտի ունենայ: Այնպէս ինչպէս որ էր պարագան մեծահարուստին եւ աղքատ Դազարոսի դրուագին մէջ, ուր մեծահարուստը կրակի մէջ կ'արայէր, մինչ աղքատ Դազարոսը Աբրահամի գիրկը: Միւս կողմէ արդարի պարագային, որուն միակ յոյսն ու ապաւենը Աստուած է, եւ իր հանապազօրեայ հացը Աստուծմէ կը սպասէ, ապա այդպիսին մահէն պիտի ազատի: Այս պարագային մահը, յաւիտենական մահուան ակնարկութիւնն է: Առաւել եւս մահը ուրիշ բան չէ, եթէ ոչ Քրիստոսի հետ ըլլալու, դէպի կեանք անցնելու պահը, ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ: 5-6 համարները նոյն միտքն է որ կ'արտայայտեն:

7-րդ համարը կը ներկայացնէ թէ ինչ կը պարահի չար մարդը երբ մեռնի: Եւ այս պարագային ով է այդ չար մարդը, ան որ նենգութեամբ իր հարստութիւնը դիզած, ուրիշը հարստահարած, երբ մեռնի անոր ակնկալութիւնը կը կորստի, յոյսը կ'ոչնչանայ: Այն ինչ բանի վրայ յոյսը դրած էր, կամ ինչ որ կ'ակնկալէր ի թերեւ կելլէ, այնպէն ինչպէս որ էր պարագան մեծահարուստ մարդուն, որուն հոգին այդ գիշեր առնուեցաւ: 8-րդ համարը կու գայ ըսելու եւ յոյսը փախու, որ Աստուծոյ խոստումն է նաեւ արդարը նեղութենէ ազատելու, ոչ միայն գալիքին, այլ նաեւ այս երկրաւոր կեանքի ընթացքին: Նեղութիւն, սակայն, ոչ պարզ ու առօրեայ նեղութեան մասին է խօսքը, այլ նեղութիւն, որ կրնայ արդարին հոգին խրոմեցնել, որուն համար Քրիստոս այդ յոյսը կու փար, ըսելով, ձեր սրտերը թող չխրովին, եւ կամ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Մեր կրած նեղութիւններուն դիմաց գալիք փառքը ոչինչ է» եւ կամ «Մեր կրած նեղութիւններուն դիմաց Աստուած կու փայ համբերութիւնը, զօրութիւնը, ու մանաւանդ ելքը»:

9-րդ համարը կը ներկայացնէ բերնին կամ լեզուին դերը, ու անոր զօրութիւնը մանաւանդ կեղծաւոր մարդու պարագային, որուն լեզուն մահացու է, որովհետեւ նոյն լեզուն է, որ կրնայ կամ դէպի կեանք առաջնորդել եւ կամ դէպի մահ: Այս պարագային կեղծաւորի լեզուն իր դրացին դէպի մահ առաջնորդելու դորին մէջն է: Յակոբոս Առաքեալ կ'ըսէ. «Լեզուն փոքրիկ հրդեհ մըն է, որ կրնայ ամբողջ անբառ մը այրել»:

10-11 համարները կը ներկայացնեն ճշմարտութիւն մը, թէ ինչպէս քաղաք մը կ'ուրախանայ արդարներու յաջողութեամբ, մինչ ատի կը ցնծան չարին կորուստով: Այսօր ալ երբ քաղաք մը ամբողջ ճնշումի փակ, հարստահարուած, կեղեքուած, բնակիչները որքան կը բնորեն գոհուին արդար մը, եւ կամ որքան կ'ուրախանան ու կը ցնծան երբ այդ անօրէն մարդը, ղեկավարը կը կորստի, կ'անհետանայ:

12-13 համարները կը ներկայացնեն լեզուին գործածութեան ժամանակը երբ լուր մնալու եւ կամ երբ խօսելու:

Որքան անհարական մակարդակի վրայ, նոյնքան եւ հաւաքականութեան պարագային, երբ ժողովուրդ մը ունի իմաստուն ղեկավար եւ այդ ղեկավարի շուրջը իմաստուն խորհրդականներ, ըստ այնմ կը պայմանաւորուի այդ քաղաքին կամ այդ ժողովուրդին վիճակը, կործանուելու կամ փրկուելու:

15-րդ համարը հեղափոխական արտայայտութիւն մըն է, որ մտածել կու փայ: Ինչ կը նշանակէ «օտարականին երաշխաւոր եղողը չարիքի կը հանդիպի», այսինքն պէտք չէ՛ երաշխաւորել: Պէտք է երաշխաւորել երբ կը ճանչնանք, բայց երբ չենք ճանչնար եւ կը փորձենք երաշխաւորել, ահա թէ ինչ կը պարահի: Միւս կողմէ, այս անգամ Քրիստոս Ինք երբ երաշխաւորեց մեզ համար, որպէս օտարականներ, թշնամացած Աստուծոյ, բայց Քրիստոսի պարագային ուրիշ է, որովհետեւ Ինք գիտէ մեզ, եւ մեր օտարացած ըլլալը, ոչ որպէս Իրեն համար անձանօթ, այլ որպէս մենք Իրմէ օտարացած, հեռացած, որ երաշխաւորեց ու մեզ մօտեցուց Աստուծոյ: